Հավելված N 14
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի
գլխավոր քարտուղարի 2020 թվականի մարտի 4-ի ՈԳՔՀ/65-2020 հրամանի

# ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԻՆԺԵՆԵՐ

### 1. Ընդհանուր դրույթներ

**1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի (այսուհետ՝ Մարզպետարան) քաղաքաշինության վարչության (այսուհետ՝ Վարչություն) գլխավոր ինժեներ (այսուհետ՝ Գլխավոր ինժեներ) ծածկագիրը՝ 93-1.2-Մ2-1:

**1.2. Ենթակա և հաշվետու է**

Գլխավոր ինժեներն անմիջական ենթակա և հաշվետու է Վարչության պետին:

**1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները**

Գլխավոր ինժեների բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության պետի տեղակալը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ Վարչության պետը:

**1.4. Աշխատավայրը**

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, քաղաք Արմավիր, Աբովյան 71:

### 2. Պաշտոնի բնութագիրը

#### 2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. Իրականացնում է Մարզի ավտոմոբիլային ճանապարհների ամառային և ձմեռային սպասարկումը, շահագործումը և հսկողությունը, ինչպես նաև մասնակցում է ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, հիմնանորոգման, նորոգման աշխատանքների պատվիրատուի գործառույթների և այլ պատվիրատուների կողմից իրականացված աշխատանքներին, ցուցաբերում աջակցություն:
2. Իրականացնում է մարզի տարածքում գտնվող ճանապարհների փաստացի վիճակի ուսումնասիրություններ:
3. Իրականացնում է մարզային ենթակայության ճանապարհների աշխատանքների համար կապալառու կազմակերպությունների ընտրությունների մրցույթների նախապատրաստման աշխատանքները, մասնակցում է ճանապարհաշինարարական կազմակերպությունների գործունեության աշխատանքներին:
4. Իրականացնում է մարզի ճանապարհաշինության զարգացման հեռանկարային ծրագրերի կազմման աշխատանքները, նախապատրաստում է Մարզի ճանապարհաշինության ոլորտի

միջնաժամկետ ծախսային ծրագրի և բյուջետային հայտի կազմումը, ներկայացումը և ՄԺԾԾ-ի քննարկման աշխատանքներին մասնակցությունը, ինչպես նաև Մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների առկա վիճակի, պահպանման մակարդակների գնահատումը և Մարզում ճանապարհաշինության ոլորտում առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների ուսումնասիրությունը, ծրագրերի ու նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմումը:

5. Իրականացնում է եղանակային պայմանների, Մարզի ավտոմոբիլային ճանապարհներին տիրող իրավիճակի և ավտոտրանսպորտի անցանելիության մասին պարբերաբար տեղեկությունների հավաքագրումը:
6. Մասնակցում է մարզային ավտոճանապարհների պահպանության և շահագործման աշխատանքների նկատմամբ հսկողության իրականացմանը, և թերությունների մատյաններում կատարում է գրանցումներ:
7. Իրականացնում է Մարզային ավտոճանապարհների պաշտպանական գոտիներում տարբեր շինությունների, կոմունիկացիաների և գովազդների տեղադրման օրինականության ուսումնասիության աշխատանքները:
8. Աջակցում է միջմարզային, ներմարզային և համայնքային հասարակական տրանսպորտի աշխատանքներին:
9. Մասնակցում, համագործակցում և աջակցություն է ցուցաբերում Մարզում երկաթուղային և ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների երթևեկության անվտանգությունն ապահովելու գործընթացներին:
10. Իրականացնում է Մարզպետին հասցեագրված, ինչպես նաև պետական կառավարման այլ մարմիններին հասցեագրված և Մարզպետարան վերահասցեագրված գրությունների, դիմումների, բողոքների, առաջարկությունների քննարկման և ուսումնասիրման աշխատանքները.
11. Իրականացնում է իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի նախապատրաստման, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցների մշակման աշխատանքներ.
12. Իրականացնում է Վարչության աշխատանքային ծրագրերի կազմման և Վարչության պետին ներկայացման աշխատանքներ.

**Իրավունքները՝**

1. Իրականացնել լիազոր մարմնի կողմից կազմակերպած միջմարզային և ներմարզային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների երթուղային ցանցերի համաձայնեցում:
2. Իրականացնել Մարզի տարածքում գտնվող ճանապարհների փաստացի վիճակի ուսումնասիրություններ, դրանց արդյունքների հիման վրա առաջարկություն ներկայացնել Վարչության պետին:
3. Ցանկացած ժամանակ ստուգել կապալառուի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու կապալառուի գործունեությանը, ստուգելով տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխանությունը:
4. Իրականացնել մարզային ավտոճանապարհների վիճակի ուսումնասիրություն, կնքելով պայմանագրեր, համաձայնագրեր կապալառու կազմակերպությունների հետ, իրականացնել դրանց դասակարգման աշխատանքները, և արդյունքների հիման վրա առաջարկություններ ներկայացնել Վարչության պետին.
5. Մարզի ճանապարհաշինության զարգացման հեռանկարային ծրագրերի մշակման, Մարզի

ճանապարհաշինության ոլորտի միջնաժամկետ ծախսային ծրագրի և բյուջետային հայտի կազմման նպատակով հավաքագրել անհրաժեշտ տեղեկատվություն: Ճանապարհաշինության ոլորտում առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների ուսումնասիրության, ծրագրերի կազման աշխատանքների նպատակով ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների առկա վիճակի վերաբերյալ հավաքագրել անհրաժեշտ տեղեկատվություն:

6. Մարզային ենթակայության ճանապարհաշինարարական կազմակերպությունների կատարված աշխատանքների դիմաց վճարումները կատարելու նպատակով իրականացնել ստուգումներ, կազմելով ընդունման-հանձնման արձանագրություններ, եզրակացություններ:
7. Իրականացնել մարզային ճանապարհների վերանորոգման աշխատանքների համար կապալառու կազմակերպությունների ընտրությունների մրցույթների նախապատրաստման աշխատանքները՝ իրականացնելով էլեկտրոնային եղանակով հրավերի պատրաստման, տեխնիկական բնութագրերի, եզրակացությունների կազմում:
8. Մարզի եղանակային պայմանների, Մարզի ավտոմոբիլային ճանապարհներին տիրող իրավիճակի և ավտոտրանսպորտի անցանելիության մասին պարբերաբար հավաքագրել տեղեկություններ:
9. Պարբերական հսկողություն իրականացնել կապալառուի կողմից կատարվող աշխատանքի ընթացքի և որակի նկատմամբ՝ առանց միջամտելու կապալառուի գործունեությանը:
10. Հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի բացակայության դեպքերում Մարզային ավտոճանապարհների պաշտպանական գոտիներում տարբեր շինությունների, կոմունիկացիաների և գովազդների տեղադրման օրինականության ուսումնասիության և կառուցապատումներ իրականացնելու նպատակով համայնքների ղեկավարների կողմից համաձայնեցման ներկայացված փաստաթղթերում թերություններ հայտնաբերելու դեպքում հետ վերադարձնել լրամշակման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին չհամապատասխանելու դեպքում չհամաձայնեցնել ներկայացված առաջարկը:
11. Հայաստանի Հանրապետության երկաթուղային գծանցների շահագործումը կանոնակարգելու միջոցով երկաթուղային և ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների երթևեկության անվտանգությունն ապահովելու նպատակով ստեղծված հանձնաժողովի աշխատանքներին մասնակցություն ապահովել, անհրաժեշտության դեպքում թերությունների ցանկը ներկայացնել համայնքների ղեկավարներին:

**Պարտականությունները՝**

1. Մարզի տարածքում գտնվող ճանապարհների փաստացի վիճակի ուսումնասիրությունների իրականացման արդյունքում կազմել ակտեր, անձնագրություններ, եզրակացություններ, ներկայացնել Վարչության պետին:
2. Մարզի ճանապարհաշինության ոլորտի միջնաժամկետ ծախսային ծրագրի և բյուջետային հայտի կազմում, լիազոր մարմնին ներկայացում և քննարկման աշխատանքներին մասնակցություն: Մարզային (տեղական) նշանակության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների առկա վիճակի գնահատման, ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման մակարդակների գնահատման և ճանապարհաշինության ոլորտում առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների ուսումնասիրության, ծրագրերի ու նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազման աշխատանքների ապահովում:
3. Ելնելով եղանակային պայմաններից և Մարզի ավտոմոբիլային ճանապարհներին տիրող իրավիճակից, ապահովել սպասարկվող ճանապարհահատվածներին տրանսպորտի շուրջօրյա և անվտանգ երթևեկությունը՝ համաձայն ճանապարհների պահպանման կանոնների:

4. Քննարկել և ընդունել տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կապալառուի կողմից կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին գրանցումներ կատարել թերությունների մատյաններում:
5. Հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի բացակայության դեպքերում, Մարզային ավտոճանապարհների պաշտպանական գոտիներում տարբեր շինությունների, կոմունիկացիաների և գովազդների տեղադրման օրինականության ուսումնասիության և կառուցապատումներ իրականացնելու նպատակով համայնքների ղեկավարների կողմից համաձայնեցման ներկայացված փաստաթղթերը ուսումնասիրել (անհրաժեշտության դեպքում նաև տեղում), կազմել մասնագիտական եզրակացություններ ու առաջարկություններ՝ համապատասխան լիազոր մարմինների համաձայնեցմանը տրամադրելու նպատակով:
6. Առաջարկել համապատասխան համայնքների ղեկավարներին համագործակցելով «Հարավ-կովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի հետ ապահովել երկաթուղային և ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների երթևեկության անվտանգությունը:
7. Կազմակերպել Մարզպետին հասցեագրված, ինչպես նաև պետական կառավարման այլ մարմիններին հասցեագրված և Մարզպետարան վերահասցեագրված գրությունների, դիմումների, բողոքների, առաջարկությունների քննարկման և ուսումնասիրման աշխատանքների իրականացումը.
8. Մասնակցել և կազմակերպել Բաժնի մասնակցությունը Մարզպետարանի, ինչպես նաև համապատասխան մարմինների տարբեր ստորաբաժանումների հետ կազմակերպված՝ առաջադրված խնդիրների լուծման շուրջ աշխատանքային և մասնագիտական քննարկումներին.
9. Իրականացնում է Վարչության աշխատանքային ծրագրերի կազմման և Վարչության պետին ներկայացման աշխատանքները.

## 3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

### 3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն.

### 3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ.

### 3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տրանսպորտի կամ ճանապարհաշինության բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

### 3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

**Ընդհանրական կոմպետենցիաներ**

1. ծրագրի մշակում
2. խնդրի լուծում
3. հաշվետվությունների մշակում
4. տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
5. բարեվարքություն

**Ընտրանքային կոմպետենցիաներ**

1. Բողոքների բավարարում
2. Ժամանակի կառավարում
3. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
4. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
5. Փաստաթղթերի նախապատրաստում

## 4. Կազմակերպական շրջանակը

### 4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

### 4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման կամ դիմումների քննարկման արդյունքում որոշումների նախապատրաստման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

### 4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման համար մասնագիտական գործունեության տարածքային ազդեցություն:

### 4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

### 4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: